ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 13
ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի գիտական խորհրդի
2026թ. հունիսի 23-ի նիստի

Խորհրդի 32 անդամներից նիստին ներկա էին 24-ը: Նիստը նախագահում էր խորհրդի նախագահ դեկան, տ.գ.թ., դոցենտ Կ. Խաչատրյանը, քարտուղարում՝ խորհրդի քարտուղար տ.գ.թ., դոցենտ Հ. Մարգարյանը:

Քվորումը ստուգելուց հետո խորհրդի նախագահը քվեարկության դրեց օրակարգը, որը միաձայն հաստատելուց հետո խորհուրդն անցավ օրակարգային հարցերի քննարկմանը (օրակարգը կցվում է):

ՕՐԱԿԱՐԳ

1. Բակալավրի և մագիստրատուրայի կրթական ծրագրերի ղեկավարների 2025-2026 ուստարվա հաշվետվությունների ընդունում
2. ՀՀ ԲԿԳԿ-ի կողմից ֆինանսավորվող «Հասարակական գիտությունների, հայագիտության և հումանիտար գիտությունների բնագավառներում հետազոտություններ - 2024» դրամաշնորհի շրջանակներում իրականացվող գիտական թեմայի կատարման երկրորդ տարվա հաշվետվության ընդունում
3. ԵՊՀ Տնտեսագիտության մեջ մաթեմատիկական մոդելավորման ամբիոնի դոցենտ Գ. Ղուկասյանի և ասիստենտ Ա. Խալաթյանի հեղինակած «PYTHON-ի գործիքակազմի կիրառումը ռեգրեսիոն վերլուծություններում» վերտառությամբ ուսումնական ձեռնարկի տպագրության երաշխավորում
4. Ընթացիկ հարցեր

1. Բակալավրի և մագիստրատուրայի կրթական ծրագրերի ղեկավարների 2025-2026 ուստարվա հաշվետվությունների ընդունում

Դեկան Կ. Խաչատրյանը հանդես եկավ առաջարկով՝ բակալավրի 3 («Տնտեսագիտություն», «Կառավարում», «Ֆինանսներ») և մագիստրատուրայի 6 («Գործարար վարչարարություն (կառավարում)», «Շուկայագիտություն (մարքեթինգ)», «Տվյալների գիտությունը բիզնեսում», «Ֆինանսներ, դրամաշրջանառություն և վարկ», «Ֆինանսներ», «Միջազգային տնտեսական հարաբերություններ») կրթական ծրագրերի ղեկավարների 2025-2026 ուստարվա հաշվետվությունների ներկայացման համար սահմանել մինչև 7 րոպե, յուրաքանչյուր հարցի և պատասխանի համար՝ մինչև 2 րոպե:

1.1 ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի բակալավրի «Տնտեսագիտություն» կրթական ծրագրի ղեկավարի 2025-2026 ուստարվա հաշվետվության հարցը:

1.1 ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

1. Դեկան Կ. Խաչատրյանը «Տնտեսագիտություն» բակալավրի կրթական ծրագրի 2025-2026 ուստարվա հաշվետվության ներկայացման համար ձայնը փոխանցեց ծրագրի ղեկավար, Տնտեսագիտության և միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի վարիչ, տ.գ.թ., դոցենտ Գրիգոր Հայրապետյանին:

2. Տ.գ.թ., դոցենտ Գ. Հայրապետյանը հաշվետվության սկզբում նշեց, որ ինչպես նախորդ, այնպես էլ հաշվետու ուստարում նախորդ տարվա համեմատ «Տնտեսագիտություն» կրթական ծրագրի և՛ առկա, և՛ հեռակա ուսուցման գծով աճ է արձանագրվել՝ հղում կատարելով դիմորդների թվի, անցողիկ միավորների համեմատական վերլուծությանը: Ընդգծեց, որ դիտարկվող ցուցանիշների կայուն աճը փաստում է կրթական ծրագրում իրականացված փոփոխությունների դրական ազդեցության, վերջինիս արդյունավետության բարձրացման և մրցունակության ապահովման մասին: Սոցհարցման արդյունքները շեշտադրելով՝ կարևորեց միայն դասախոսությամբ կազմակերպվող դասընթացները սեմինար կամ գործնական պարապմունքներով լրացնելու հանգամանքը: Մասնավորապես՝ «Ազգային տնտեսություն», «Տնտեսական պատմություն» և «Համաշխարհային տնտեսություն» դասընթացների գծով սեմինար կամ գործնական պարապմունքները սկսել են գործել 2025-2026 ուստարվանից, ինչը նկատելիորեն բարձրացրել է նշված դասընթացների դասավանդման և գնահատման արդյունավետությունը: Նշեց, որ «Տնտեսագիտություն» կրթական ծրագիրը ֆակուլտետի մյուս 5 կրթական ծրագրերի (բակալավրի՝ «Կառավարում», «Ֆինանսներ», մագիստրատուրայի՝ «Գործարար վարչարարություն (կառավարում)», «Շուկայագիտություն (մարքեթինգ)», «Տվյալների գիտությունը բիզնեսում») հետ գտնվում է միջազգային հավատարմագրման փուլում և որ գործընթացը իրականացվում է պահանջվող կարգով և նախատեսվում է ավարտին հասցնել մինչև տարեվերջ: Հավելեց, որ մասնագիտական հայալեզու գրականության մասով հաշվետու տարում մեկնարկել և շարունակվում են «Միկրոտնտեսագիտություն» ուսումնական ձեռնարկի պատրաստման ու հրատարակման աշխատանքները: Հաշվետվության վերջում անդրադարձավ կրթական ծրագրերի իրազեկվածության բարձրացմանն ուղղված քայլերին, մասնավորապես՝ կարևորեց ֆակուլտետում դպրոցականների հետ հանդիպումները, ակտիվ ներգրավվածությունը «ԵՊՀ տնտեսագիտական դպրոց»-ի գործունեությանը, ինչպես նաև «Տնտեսագիտություն» առարկայից առաջին անգամ

կազմակերպված «ԵՊՀ օլիմպիադա-2026»-ի նախապատրաստական և անցկացման աշխատանքները:

Հարցեր չհնչեցին: Ելույթներ չեղան:

3. Դեկան Կ. Խաչատրյանը նախ շնորհակալություն հայտնեց «Տնտեսագիտություն» բակալավրի կրթական ծրագրի ղեկավարին հաշվետու տարում կատարած զգալի և ծավալուն աշխատանքների համար, ապա կոչ արեց քվեարկությամբ հաստատել հաշվետվությունը՝ գնահատելով այն բավարար:

1.1 ՈՐՈՇԵՑԻՆ. Հիմք ընդունելով ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի բակալավրի «Տնտեսագիտություն» կրթական ծրագրի ղեկավարի 2025-2026 ուստարվա ներկայացրած հաշվետվությունը և հաշվի առնելով խորհրդի նիստում արտահայտված կարծիքները՝ հաստատել 2025-2026 ուստարվա բակալավրի «Տնտեսագիտություն» կրթական ծրագրի ղեկավարի հաշվետվությունը՝ գնահատելով այն բավարար:

Հաշվետվությունը հաստատվեց՝ միաձայն քվեարկությամբ:

1.2 ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի բակալավրի «Կառավարում» կրթական ծրագրի ղեկավարի 2025-2026 ուստարվա հաշվետվության հարցը:

1.2 ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

1. Դեկան Կ. Խաչատրյանը «Կառավարում» բակալավրի կրթական ծրագրի 2025-2026 ուստարվա հաշվետվության ներկայացման համար ձայնը փոխանցեց ծրագրի ղեկավար, տ.գ.թ., դոցենտ Նոննա Խաչատրյանին:

2. Տ.գ.թ., դոցենտ Ն. Խաչատրյանը նախ նշեց, որ «Կառավարում» կրթական ծրագրի ղեկավար է նշանակվել հաշվետու տարվա փետրվար ամսից և ամփոփ ներկայացրեց հաշվետու տարում «Կառավարում» կրթական ծրագրի լավարկման ուղղությամբ կատարված աշխատանքները: Մատնանշեց, որ սույն կրթական ծրագրով ևս նախորդ ուստարվա համեմատ գրանցվել է դիմորդների թվի և անցողիկ միավորների կայուն աճ՝ ինչպես առկա, այնպես էլ հեռակա ուսուցման գծով: Հավելեց, որ ուսանողների շրջանում իրազեկման հանդիպումները պարբերական բնույթ են կրել, մասնավորապես՝ գրադարանից օգտվելու, ընտրովի դասընթացների ընտրության, պրակտիկայի կազմակերպման, ինչպես նաև ուսումնական գործընթացի արդյունավետության բարձրացմանը նպաստող այլ հարցերի վերաբերյալ տեղեկատվության ներկայացման նպատակով: Ընդգծեց, որ 2025-2026 ուստարում կրթական ծրագրի 3 ուսանող մասնակցել է Erasmus+ միջազգային շարժունության ծրագրին, 4 ուսանող արժանացել են

կրթաթոշակների, որոնցից 2-ը անվանական, իսկ մյուս 2-ը՝ «Բիբլոս Բանկ Արմենիա» ՓԲԸ-ի կողմից սահմանված, կրթական ծրագրի դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողների հարցման արդյունքների միջինը կազմել է 4.54 միավոր: Հաշվետվության վերջում ներկայացրեց կրթական ծրագրի բարեփոխման ուղղությամբ կատարված աշխատանքները՝ վերաձևակերպվել է կրթական ծրագրի նպատակը, խմբագրվել են վերջնարդյունքները, վերանայվել է ուսումնական պլանի քարտեզը, նաև հավելեց, որ նկարագրիչներում փոփոխություններ իրականացնելու ուղղությամբ աշխատանքները շարունակվում են՝ դրանք համապատասխանեցնելով FIBAA միջազգային հավատարմագրման գործակալության չափանիշներին:

Հարցեր չհնչեցին: Ելույթներ չեղան:

3. Դեկան Կ. Խաչատրյանը նախ շնորհակալություն հայտնեց «Կառավարում» բակալավրի կրթական ծրագրի ղեկավարին հաշվետու տարում կատարած զգալի և ծավալուն աշխատանքների համար, ապա կոչ արեց քվեարկությամբ հաստատել հաշվետվությունը՝ գնահատելով այն բավարար:

1.2 ՈՐՈՇԵՑԻՆ. Հիմք ընդունելով ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի բակալավրի «Կառավարում» կրթական ծրագրի ղեկավարի 2025-2026 ուստարվա ներկայացրած հաշվետվությունը և հաշվի առնելով խորհրդի նիստում արտահայտված կարծիքները՝ հաստատել 2025-2026 ուստարվա բակալավրի «Կառավարում» կրթական ծրագրի ղեկավարի հաշվետվությունը՝ գնահատելով այն բավարար:

Հաշվետվությունը հաստատվեց՝ միաձայն քվեարկությամբ:

1.3 ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի բակալավրի «Ֆինանսներ» կրթական ծրագրի ղեկավարի 2025-2026 ուստարվա հաշվետվության հարցը:

1.3 ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

1. Դեկան Կ. Խաչատրյանը «Ֆինանսներ» բակալավրի կրթական ծրագրի 2025-2026 ուստարվա հաշվետվության ներկայացման համար ձայնը փոխանցեց ծրագրի ղեկավար, Ֆինանսահաշվային ամբիոնի վարիչի պաշտոնակատար, տ.գ.թ., դոցենտ Գնել Սահակյանին:

2. Տ.գ.թ, դոցենտ Գ. Սահակյանը հաշվետվության սկզբում ներկայացրեց կրթական ծրագրի ընթացիկ վիճակը՝ հղում կատարելով հաշվետու տարում Ֆինանսահաշվային ամբիոնում առկա և հեռակա ուսուցման գծով ուսանողների թվաքանակին՝ ըստ կուրսերի: Մատնանշեց, որ ներկայացված ցուցանիշները փաստում են, որ տեղի է ունենում զտում՝ ընդունված 70 դիմորդներից ավարտում են շուրջ 55-ը՝ 20 տոկոսը կա՛մ տեղափոխվում է,

կա՛մ հեռացվում է: Ամփոփ ներկայացրեց նախորդ ուստարվա համեմատությամբ հաշվետու ժամանակահատվածում առկա ավարտական աշխատանքների գնահատականների պատկերը՝ որպես կրթական ծրագրի արդյունավետության ցուցիչ, և ընդգծեց, որ բակալավրի ընդունելության դիմումների քանակը գրեթե անփոփոխ է մնում վերջին մի քանի տարիներին: Հավելեց, որ միջազգային հավատարմագրման գործընթացի շրջանակում շարունակվում են «Ֆինանսներ» բակալավրի կրթական ծրարգրի բարեփոխման ուղղությամբ կատարվող աշխատանքները՝ մասնավորապես հաշվետու ժամանակահատվածի համար ամբիոնը կրթական ծրագրում փոփոխություն չի իրականացրել, իսկ 2026-2030 կրթական ծրագրի համար նախաձեռնել է հետևյալ փոփոխությունը՝ «Պետական ֆինանսներ», «Ֆինանսների հիմունքներ», «Ֆինանսական ինստիտուտներ և շուկաներ» դասընթացների սեմինար ժամերը դարձնել գործնական: Հաշվետվության վերջում ներկայացրեց առկա խնդիրները՝ մատնանշելով, որ դրանք նույն այն խնդիրներն են, որոնք կային նախորդ տարում. բաղադրիչների խնդիրը (գործնական ժամերին ընթացիկ ստուգում անցկացնելն անարդյունավետ է), դասացուցակի խնդիրը (շաբաթվա կտրվածքով դասաժամերը բաշխված են անհամաչափ), դասերի հաշվին հրավիրյալ դասախոսներին լսարանի տրամադրումը, գարնանային կիսամյակում ոչ աշխատանքային օրերից՝ ապրիլի 24-ը և մայիսի 1-ը, շաբաթվա նույն օրերն են՝ ստացվում է 15 մուտքից միայն 13 մուտք:

3. Հարց հնչեցրեց տ.գ.դ., պրոֆեսոր Թ. Թորոսյանը: Հարցադրումն առնչվում էր կրթական ծրագրում «Միջազգային տնտեսագիտություն» դասընթացը որպես պարտադիր դասընթաց ներառելուն:

4. Տ.գ.թ, դոցենտ Գ. Սահակյանը հարցադրմանը պատասխանեց հակիրճ՝ ԵՊՀ նոր պահանջներին համահունչ կրթական ծրագրում կատարված փոփոխությունների արդյունքում «Միջազգային տնտեսագիտություն» դասընթացն ընդգրկվել է կամընտրական դասընթացների կառուցամասում և հաշվի առնելով տվյալ դասընթացի կարևորությունը՝ առաջին իսկ հնարավորության դեպքում պատրաստ են այն տեղափոխել պարտադիր դասընթացների կառուցամաս:

5. Դեկան Կ. Խաչատրյանը նախ շնորհակալություն հայտնեց «Ֆինանսներ» բակալավրի կրթական ծրագրի ղեկավարին հաշվետու տարում կատարած զգալի և ծավալուն աշխատանքների համար, ապա կոչ արեց քվեարկությամբ հաստատել հաշվետվությունը՝ գնահատելով այն բավարար:

1.3 ՈՐՈՇԵՑԻՆ. Հիմք ընդունելով ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի բակալավրի «Ֆինանսներ» կրթական ծրագրի ղեկավարի 2025-2026 ուստարվա ներկայացրած հաշվետվությունը և հաշվի առնելով խորհրդի նիստում արտահայտված կարծիքները՝ հաստատել 2025-2026 ուստարվա բակալավրի

«Ֆինանսներ» կրթական ծրագրի ղեկավարի հաշվետվությունը՝ գնահատելով այն բավարար:

Հաշվետվությունը հաստատվեց՝ միաձայն քվեարկությամբ:

1.4 ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի մագիստրատուրայի «Գործարար վարչարարություն (կառավարում)» կրթական ծրագրի ղեկավարի 2025-2026 ուստարվա հաշվետվության հարցը:

1.4 ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

1. Դեկան Կ. Խաչատրյանը «Գործարար վարչարարություն (կառավարում)» մագիստրոսական կրթական ծրագրի 2025-2026 ուստարվա հաշվետվության ներկայացման համար ձայնը փոխանցեց ծրագրի ղեկավար, տեխ.գ.թ., դոցենտ Հարություն Զաքոյանին:

2. Տեխ.գ.թ., դոցենտ Հ. Զաքոյանը նշեց, որ գիտխորհրդի անդամներին էլեկտրոնային ծանուցմամբ ուղարկված հաշվետվության մեջ ամփոփ ներկայացված են ծրագրի քանակական բնութագրերը (ընդունելությունը և ուսանողական համակազմը, ուսումնական առաջադիմության ցուցանիշները, տվյալներ ծրագրի շրջանավարտների վերաբերյալ) վերջին 5 ուստարիների կտրվածքով, որոնք փաստում են, որ ծրագիրը հաշվետու տարում կայացել է և՛ առկա, և՛ հեռակա ուսուցման գծով՝ պահպանելով պահանջվածությունը, ընդունելության միջին միավորի հարաբերական կայունությունը, բարձր միջին որակական գնահատականը (ՄՈԳ-ի աճ մինչև 17.06) և շրջանավարտների ակնառու հաջողությունները: Հավելեց, որ հաշվետու ուստարվա առաջադիմության պատկերը (դրական գնահատականների 92.30% մասնաբաժին և ամփոփիչ ատեստավորման 100% դրական արդյունք՝ 16 շրջանավարտով) վկայում է, որ պետք է շարունակել ուշադիր վերահսկել ուսանողական առաջընթացի ռիսկային հատվածները և ժամանակին կիրառել աջակցող ու կանխարգելիչ միջոցառումներ: Որպես հետադարձ կապ ուսանողական հարցումների դերը շեշտադրելով՝ նշեց, որ ծրագրի դասավանդման բովանդակային հասանելիությունը, խորհրդատվական աջակցությունը, քննադատական մտածողության խթանումը և գնահատման օբյեկտիվությունը ստացել են բարձր գնահատականներ, սակայն ծրագրում դեռևս կան վերանայման ենթակա բովանդակային հատվածներ, որոնց նկատմամբ անհրաժեշտ է շարունակական կառավարչական ուշադրություն: Ընդգծեց գործարար և ինստիտուցիոնալ միջավայրի հետ ծրագրի կենդանի կապի կարևորությունը՝ ներկայացնելով պրակտիկայի և համագործակցության բազայում ընդգրկված պետական, ֆինանսական, խորհրդատվական և մասնավոր հատվածների նշանակալի դերակատարներին: Մատնանշեց, որ ծրագրի զարգացման տրամաբանությունը պահանջել է ուսումնական պլանի նպատակային վերանայում՝ դուրս

մղել այն բաղադրիչները, որոնք չեն ապահովում անմիջական կիրառելիություն, և ուժեղացնել այն դասընթացները, որոնք մեծացնում են կառավարչական որոշումների ճշգրտությունը, թվային վերլուծության կարողությունները, գործարար հաղորդակցության արդյունավետությունը և միջազգային կառավարման չափանիշների գործնական իմացությունը: Ամփոփելով հաշվետվությունը՝ նշեց, որ կատարվել է ծրագրի ուժեղ և թույլ կողմերի, արտաքին հնարավորությունների և վտանգների (SWOT) վերլուծություն՝ ինչը հիմք է հանդիսանալու ծրագրի բարելավմանն ուղղված հետագա գործողությունների պլանավորման համար, այդ թվում՝ ծրագրի միջազգային հավատարմագրման առաջմղման, հաջորդ հաշվետու շրջանի առաջնահերթ խնդիրների բացահայտման և լուծման համատեքստում:

3. Հարց հնչեցրեց ֆակուլտետի ՈւԽ նախագահ, «Կառավարում» կրթական ծրագրի 3-րդ կուրսի ուսանող Բենիկ Բալայանը: Հարցադրումն առնչվում էր բակալավրի «Կառավարում» կրթական ծրագրի շրջանակում դասավանդվող որոշ դասընթացների («Առաջնորդություն», «Հաղորդակցություն») կրկնության հնարավորությանը «Գործարար վարչարարություն (կառավարում)» կրթական ծրագրում:

4. Տեխ.գ.թ., դոցենտ Հ. Զաքոյանը հարցադրմանը պատասխանեց հակիրճ՝ բակալավրի և մագիստրատուրայի կրթական ծրագրերում դասընթացների կրկնության հնարավորությունը բացառվում է՝ ուսումնական պլանների բնութագրերի և կրթական վերջնարդյունքների առանձնահատկություններով, նաև դասավանդման ժամաքանակի սղությամբ պայմանավորված:

5. Դեկան Կ. Խաչատրյանը նախ շնորհակալություն հայտնեց «Գործարար վարչարարություն (կառավարում)» մագիստրոսական կրթական ծրագրի ղեկավարին հաշվետու տարում կատարած զգալի և ծավալուն աշխատանքների համար, ապա կոչ արեց քվեարկությամբ հաստատել հաշվետվությունը՝ գնահատելով այն բավարար:

1.4 ՈՐՈՇԵՑԻՆ. Հիմք ընդունելով ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի մագիստրատուրայի «Գործարար վարչարարություն (կառավարում)» կրթական ծրագրի ղեկավարի 2025-2026 ուստարվա ներկայացրած հաշվետվությունը և հաշվի առնելով խորհրդի նիստում արտահայտված կարծիքները՝ հաստատել 2025-2026 ուստարվա մագիստրատուրայի «Գործարար վարչարարություն (կառավարում)» կրթական ծրագրի ղեկավարի հաշվետվությունը՝ գնահատելով այն բավարար:

Հաշվետվությունը հաստատվեց՝ միաձայն քվեարկությամբ:

1.5 ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի մագիստրատուրայի «Շուկայագիտություն (մարքեթինգ)» կրթական ծրագրի ղեկավարի 2025-2026 ուստարվա հաշվետվության հարցը:

1.5 ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

1. Դեկան Կ. Խաչատրյանը «Շուկայագիտություն (մարքեթինգ)» մագիստրոսական կրթական ծրագրի 2025-2026 ուստարվա հաշվետվության ներկայացման համար ձայնը փոխանցեց ծրագրի ղեկավար, Կառավարման և գործարարության ամբիոնի վարիչ, տ.գ.թ., դոցենտ Աննա Հակոբջանյանին:

2. Տ.գ.թ., դոցենտ Ա. Հակոբջանյանը ամփոփ ներկայացրեց հաշվետու ուստարում ծրագրի կայացման մասով պատկերը. առկա ուսուցման գծով՝ 24 դիմորդ և 15 ընդունված, հեռակա ուսուցման գծով՝ 25 դիմորդ և 20 ընդունված: Ընդգծեց, որ կրթական ծրագիրը միջազգային հավատարմագրման փուլում է և թվարկեց հաշվետու տարում կրթական ծրագրի ուսումնական պլանում կատարված փոփոխությունները՝ **1)** վերանայվել են ծրագրի վերջնարդյունքները և դասընթացների նկարագրիչները, **2)** միջազգային առաջատար բուհերի փորձի ուսումնասիրության արդյունքում որոշակի փոփոխություններ են կատարվել երրորդ կիսամյակի կամընտրական դասընթացների շարքում, **3)** կամընտրական դասընթացների թվում ներառվել են «Մարքեթինգային տվյալների վերլուծություն» և «Վաճառքի հմտություններ ու մարքեթինգ» դասընթացները: Ընդգծեց այն փաստը, որ հաշվետու ուստարում «Շուկայագիտություն (մարքեթինգ)» և «Կառավարման հոգեբանություն» մագիստրոսական կրթական ծրագրերի համագործակցությամբ՝ «Անհատականացված վարքագծային միջամտությունների մարքեթինգային ազդեցությունը սպառողական որոշումների վրա» թեմայով կատարվում է միջմասնագիտական մագիստրոսական թեզ, իսկ մագիստրանտներն արժանացել են 750 000 դրամ գումարի չափով կրթական դրամաշնորհի: Մատնանշեց այն, որ հաստատվել է «Շուկայագիտություն (մարքեթինգ)» մագիստրոսական կրթական ծրագրի լրացուցիչ ֆինանսավորման հայտը և ներկայացրեց վերջինիս շրջանակում իրականացված ծրագրի բարելավմանն ուղղված միջոցառումները: Հակիրճ անդրադարձավ հաշվետու տարում ծրագրի շրջանակում կազմակերպված թվով 10 վարպետության դասերին, մասնագիտական պրակտիկա անցնելու հնարավորությանը՝ կարևորելով վերջիններիս դերակատարությունը կրթական ծրագրի արդյունավետության բարձրացման գործում, նաև ծրագրի ուսանողների ակտիվ մասնակցությանը գիտաժողովներին (PROJECT MANAGEMENT AWARDS 2025 (PMI ARMENIA), INSIDE THE WINNERS: The Best Marketing Cases from Global Festivals (BSMI)), ինչպես նաև հոդվածների տպագրությանը (2024-2025 ուստարվա շրջանավարտ Ա. Սվազյանի և կրթական ծրագրի ղեկավար, տ.գ.թ., դոցենտ Ա. Հակոբջանյանի համահեղինակությամբ «Анализ воздействия маркетинговых инструментов на финансовое поведение потребителя» վերտառությամբ գիտական հոդվածն ընդունված է տպագրության, ամսագիրը լույս կտեսնի 2026 թ. հունիս/հուլիս ամսին):

Հարցեր չինչեցին: Ելույթներ չեղան:

3. Դեկան Կ. Խաչատրյանը նախ շնորհակալություն հայտնեց «Շուկայագիտություն (մարքեթինգ)» մագիստրոսական կրթական ծրագրի ղեկավարին հաշվետու տարում կատարած զգալի և ծավալուն աշխատանքների համար, ապա կոչ արեց քվեարկությամբ հաստատել հաշվետվությունը՝ գնահատելով այն բավարար:

1.5 ՈՐՈՇԵՑԻՆ. Հիմք ընդունելով ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի մագիստրատուրայի «Շուկայագիտություն (մարքեթինգ)» կրթական ծրագրի ղեկավարի 2025-2026 ուստարվա ներկայացրած հաշվետվությունը և հաշվի առնելով խորհրդի նիստում արտահայտված կարծիքները՝ հաստատել 2025-2026 ուստարվա մագիստրատուրայի «Շուկայագիտություն (մարքեթինգ)» կրթական ծրագրի ղեկավարի հաշվետվությունը՝ գնահատելով այն բավարար:

Հաշվետվությունը հաստատվեց՝ միաձայն քվեարկությամբ:

1.6 ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի մագիստրատուրայի «Տվյալների գիտությունը բիզնեսում» կրթական ծրագրի ղեկավարի 2025-2026 ուստարվա հաշվետվության հարցը:

1.6 ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

1. Դեկան Կ. Խաչատրյանը «Տվյալների գիտությունը բիզնեսում» մագիստրոսական կրթական ծրագրի 2025-2026 ուստարվա հաշվետվության ներկայացման համար ձայնը փոխանցեց ծրագրի ղեկավար, տ.գ.դ., պրոֆեսոր Ռուբեն Գևորգյանին:

2. Տ.գ.դ., պրոֆեսոր Ռ. Գևորգյանը նշեց, որ հաշվետու ուստարում մագիստրատուրայի ընդունելությունը կազմակերպվել է 2 փուլով, և ներկա պահին 1-ին կուրսում սովորում է 24 ուսանող: Դիմորդները եղել են ՀՀ տարբեր բարձրագույն ուսումնական հաստատությունների (ԵՊՀ, ՀՖՀՀ, ՀՌՀ, ՀՊՏՀ, ՀԱՊՀ) շրջանավարտներ: Հաշվետու տարվանից սկսած՝ ծրագրի ուսումնական պլանը ենթարկվել է փոփոխության. 2 տարի տևողությամբ կրթական ծրագիրը դարձել է 1.5 տարի (3 կիսամյակ, 90 կրեդիտ): Այս փոփոխությամբ մշակվել է ծրագրի նոր ուսումնական պլանը, որտեղ հաշվի են առնվել տվյալագիտության (Data Science) ոլորտում արձանագրված վերջին միտումները, մասնավորապես՝ մեծ լեզվական մոդելների (LLM) և գեներատիվ արհեստական բանականության արագ տարածումը, ինչը նոր մարտահրավերներ ու հնարավորություններ է ստեղծում բիզնեսի և տնտեսության համար: Ընդգծեց այն փաստը, որ ծրագրի շրջանավարտներից լավագույնները ավարտելուց հետո՝ իրենց հիմնական աշխատանքին զուգահեռ, շարունակում են իրենց գործունեությունը ծրագրում՝ որպես դասախոս, ինչը թույլ է տալիս ոլորտի մրցունակ և բանիմաց մասնագետներին ներգրավել ուսումնական գործընթացում: Հաջորդ կարևոր փաստը՝ դասախոսների ներգրավումն է

գիտական դրամաշնորհներում (ՀՀ ԲԿԳԿ-ի կողմից ֆինանսավորվող «Մարդ-համակարգիչ փոխազդեցություն և ուսումնառություն» գիտական դրամաշնորհի աշխատանքներում հաշվետու ուստարում ծրագրի ևս 2 շրջանավարտ-դասախոսներ են ներգրավվել): Շեշտադրեց այն հանգամանքը, որ ավանդաբար «Ձեռնարկությունների ինկուբատոր» հիմնադրամը (EIF) և «PMI Science» գիտահետազոտական կենտրոնը ծրագրի լավագույն ուսանողներին տրամադրում են ֆինանսական աջակցություն՝ հաշվետու ուստարում ծրագրի 1-ին և 2-րդ կուրսերի 11 լավագույն ուսանողների տրամադրվել է ֆինանսական աջակցություն՝ ուսման վարձի 70%-ի չափով: Հավելեց, որ ՏԳԲ մագիստրոսական կրթական ծրագիրը ևս մասնակցել է ԵՊՀ կողմից հայտարարված առկա ուսուցման մագիստրոսական կրթական ծրագրերին հատկացվող լրացուցիչ ֆինանսավորման մրցույթին և ներկայացրեց ծրագրի բարելավմանն ուղղված շահած գումարի բաշխման ուղղությունները: Ամփոփելով հաշվետվությունը՝ ներկայացրեց ՏԳԲ դասախոսների միջազգային համագործակցության և վերապատրաստման ուղղությամբ կատարված աշխատանքները հաշվետու ուստարում (Ռ. Գևորգյան՝ դասախոսությունների շարք Սլովակիայի Բրատիսլավա քաղաքի Տնտեսագիտության և բիզնեսի համալսարանում, Լ. Ջիլֆիմյան՝ վերապատրաստումներ Փարիզում):

3. Հարցեր հնչեցրեցին տ.գ.դ., պրոֆեսոր Թ. Թորոսյանը, տ.գ.թ., դոցենտ Գ. Սահակյանը: Հարցադրումներն առնչվում էին ՏԳԲ մագիստրոսական կրթական ծրագրի հնարավոր մրցակիցների պայմաններին:

4. Տ.գ.դ., պրոֆեսոր Ռ. Գևորգյանը հարցադրումներին պատասխանեց հակիրճ՝ «Տվյալների գիտությունը բիզնեսում» մագիստրոսական կրթական ծրագիրը առաջինը բացվել է ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետում 2017 թվականին: Մրցակից կրթական ծրագրերը բացվել են ավելի ուշ, բայց գործում են արտոնյալ պայմաններում, քանի որ օգտվում են ուսման վարձի փոխհատուցման՝ եկամտային հարկի հետվերադարձի սկզբունքից:

5. Դեկան Կ. Խաչատրյանը նախ շնորհակալություն հայտնեց «Տվյալների գիտությունը բիզնեսում» մագիստրոսական կրթական ծրագրի ղեկավարին հաշվետու տարում կատարած զգալի և ծավալուն աշխատանքների համար, ապա կոչ արեց քվեարկությամբ հաստատել հաշվետվությունը՝ գնահատելով այն բավարար:

1.6 ՈՐՈՇԵՑԻՆ. Հիմք ընդունելով ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի մագիստրատուրայի «Տվյալների գիտությունը բիզնեսում» կրթական ծրագրի ղեկավարի 2025-2026 ուստարվա ներկայացրած հաշվետվությունը և հաշվի առնելով խորհրդի նիստում արտահայտված կարծիքները՝ հաստատել 2025-2026 ուստարվա մագիստրատուրայի «Տվյալների գիտությունը բիզնեսում» կրթական ծրագրի ղեկավարի հաշվետվությունը՝ գնահատելով այն բավարար:

Հաշվետվությունը հաստատվեց՝ միաձայն քվեարկությամբ:

1.7 ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի մագիստրատուրայի «Ֆինանսներ, դրամաշրջանառություն և վարկ» կրթական ծրագրի ղեկավարի 2025-2026 ուստարվա հաշվետվության հարցը:

1.7 ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

1. Դեկան Կ. Խաչատրյանը «Ֆինանսներ, դրամաշրջանառություն և վարկ» մագիստրոսական կրթական ծրագրի 2025-2026 ուստարվա հաշվետվության ներկայացման համար ձայնը փոխանցեց ծրագրի ղեկավար, Ֆինանսահաշվային ամբիոնի վարիչի պաշտոնակատար, տ.գ.թ., դոցենտ Գնել Սահակյանին:

2. Տ.գ.թ, դոցենտ Գ. Սահակյանը նախ ներկայացրեց ընթացիկ վիճակը՝ հաշվետու տարում առկա ուսուցման «Ֆինանսներ, դրամաշրջանառություն և վարկ» մագիստրոսական կրթական ծրագրով սովորել և հաջողությամբ ավարտել են մագիստրատուրայի 2-րդ կուրսի թվով 11 ուսանող (որոնցից՝ 5-ը ստացել է «գերազանց» գնահատական, 2-ը՝ «լավ», 4-ը՝ «բավարար»): Նշեց, որ հեռակա ուսուցման նույն ծրագրով սովորող ուսանողներ ամբիոնը չի ունեցել: Հաշվետու ուստարում առկա և հեռակա ընդունելություն չի եղել՝ առկան չի հայտագրվել, քանի որ 2025-2026 ուստարվանից ամբիոնում գործում է 1 տարի տևողությամբ «Ֆինանսներ» մագիստրոսական կրթական ծրագիրը (2 կիսամյակ, 60 կրեդիտ): 1 տարի տևողությամբ «Ֆինանսներ» մագիստրոսական կրթական ծրագրի ներդրումը հիմնավորեց՝ մատնանշելով վերջին տարիներին ընդունելության ձախողումները և կրթական շուկայի նոր մարտահրավերները: Հավելեց, որ ամբիոնում աշխատանքներ են տարվում հանրային ֆինանսների գծով նոր մագիստրոսական կրթական ծրագիր բացելու ուղղությամբ: Հաշվետվությունն ամփոփեց՝ մագիստրոսական կրթական ծրագրի ղեկավարի դերի մեծացման և ծրագրի կայացման գործում իրազեկման մասով ֆակուլտետում տարվող աշխատանքների ինտենսիվությունը և պարբերականությունը ակտիվացնելու անհրաժեշտության վերաբերյալ փաստարկներով:

Հարցեր չհնչեցին: Ելույթներ չեղան:

3. Դեկան Կ. Խաչատրյանը նախ շնորհակալություն հայտնեց «Ֆինանսներ, դրամաշրջանառություն և վարկ» մագիստրոսական կրթական ծրագրի ղեկավարին հաշվետու տարում կատարած զգալի և ծավալուն աշխատանքների համար, ապա կոչ արեց քվեարկությամբ հաստատել հաշվետվությունը՝ գնահատելով այն բավարար:

1.7 ՈՐՈՇԵՑԻՆ. Հիմք ընդունելով ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի մագիստրատուրայի «Ֆինանսներ, դրամաշրջանառություն և վարկ»

կրթական ծրագրի ղեկավարի 2025-2026 ուստարվա ներկայացրած հաշվետվությունը և հաշվի առնելով խորհրդի նիստում արտահայտված կարծիքները՝ հաստատել 2025-2026 ուստարվա մագիստրատուրայի «Ֆինանսներ, դրամաշրջանառություն և վարկ» կրթական ծրագրի ղեկավարի հաշվետվությունը՝ գնահատելով այն բավարար:

Հաշվետվությունը հաստատվեց՝ միաձայն քվեարկությամբ:

1.8 ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի մագիստրատուրայի «Ֆինանսներ» կրթական ծրագրի ղեկավարի 2025-2026 ուստարվա հաշվետվության հարցը:

1.8 ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

1. Դեկան Կ. Խաչատրյանը «Ֆինանսներ» մագիստրոսական կրթական ծրագրի 2025-2026 ուստարվա հաշվետվության ներկայացման համար ձայնը փոխանցեց ծրագրի ղեկավար, տ.գ.թ., ասիստենտ Կարեն Սահակյանին:

2. Տ.գ.թ., ասիստենտ Կ. Սահակյանը նախ ներկայացրեց ընթացիկ վիճակը՝ առկա ուսուցման «Ֆինանսներ» մագիստրոսական կրթական ծրագրով հաշվետու տարում սովորել է 13 ուսանող: Հեռակա ուսուցման նույն կրթական ծրագրով սովորող ուսանողներ ամբիոնը չունի: Ընդգծեց, որ ծրագիրը հավանության է արժանացել ֆակուլտետի գիտական խորհրդի կողմից, ինչպես նաև հաստատվել է ԿԳՄՍ նախարարության կողմից (2024թ. հոկտեմբեր): Նշեց, որ հաշվետու տարում ծրագրին դիմել է 13 դիմորդ՝ որից 4 դիմորդ ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետից, 4 դիմորդ Հայաստանի ֆրանսիական համալսարանից, 2 դիմորդ ԵՊՀ Իջևանի մասնաճյուղից և 3 դիմորդ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանից: 2025-2026 ուստարվա ընթացքում կատարված աշխատանքների ամփոփ գնահատմամբ, ձեռքբերումների և փոփոխությունների համադրմամբ՝ առաջարկեց 1 տարի տևողությամբ «Ֆինանսներ» կրթական ծրագրի փաստացի տևողությունը սահմանել 1 տարի. այն է՝ դասերն ավարտել մայիսի 30-ին, իսկ մագիստրոսական թեզերի պաշտպանությունը նախատեսել օգոստոսի երրորդ տասնօրյակում:

Հարցեր չհնչեցին: Ելույթներ չեղան:

3. Դեկան Կ. Խաչատրյանը նախ շնորհակալություն հայտնեց «Ֆինանսներ» մագիստրոսական կրթական ծրագրի ղեկավարին հաշվետու տարում կատարած զգալի և ծավալուն աշխատանքների համար, ապա կոչ արեց քվեարկությամբ հաստատել հաշվետվությունը՝ գնահատելով այն բավարար:

1.8 ՈՐՈՇԵՑԻՆ. Հիմք ընդունելով ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի մագիստրատուրայի «Ֆինանսներ» կրթական ծրագրի ղեկավարի 2025-2026

ուստարվա ներկայացրած հաշվետվությունը և հաշվի առնելով խորհրդի նիստում արտահայտված կարծիքները՝ հաստատել 2025-2026 ուստարվա մագիստրատուրայի «Ֆինանսներ» կրթական ծրագրի ղեկավարի հաշվետվությունը՝ գնահատելով այն բավարար:

Հաշվետվությունը հաստատվեց՝ միաձայն քվեարկությամբ:

1.9 ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի մագիստրատուրայի «Միջազգային տնտեսական հարաբերություններ» կրթական ծրագրի ղեկավարի 2025-2026 ուստարվա հաշվետվության հարցը:

1.9 ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

1. Դեկան Կ. Խաչատրյանը «Միջազգային տնտեսական հարաբերություններ» մագիստրոսական կրթական ծրագրի 2025-2026 ուստարվա հաշվետվության ներկայացման համար ձայնը փոխանցեց ծրագրի ղեկավար, տ.գ.թ., դոցենտ Հասմիկ Հովհաննիսյանին:

2. Տ.գ.թ., դոցենտ Հ. Հովհաննիսյանը ամփոփ ներկայացրեց հաշվետու ուստարում ծրագրի կայացման մասով պատկերը. ծրագրում ընդգրկվել է ընդհանուր առմամբ 11 ուսանող, որոնցից 5-ը՝ առկա կրթական համակարգում, 6-ը՝ հեռակա: Հաշվետու տարվա ընթացքում հեռակա ուսուցման համակարգում մեկ ուսանող հեռացվել է անհարգելի բացակայությունների պատճառով: Մագիստրանտների միջին որակական գնահատականը առկա ուսուցման համակարգում կազմել է 14.4, իսկ հեռակա ուսուցման համակարգում՝ 13.7: Հավելեց, որ ուսանողների մեծամասնությունը ցուցաբերել է կրթական ծրագրով նախատեսված վերջնարդյունքների յուրացման ընդունելի մակարդակ: Մատնանշեց այն միջոցառումները, որոնք իրականացվել են կրթական ծրագրի որակն ու զարգացումն ապահովելու նպատակով: Կարևորեց շրջանավարտների հետ կայացած երկու հանդիպումները և համագործակցության հնարավորությունները՝ ծրագրի զարգացման, աշխատաշուկայի պահանջարկին ավելի համարժեք արձագանքելու և հետադարձ կապի մեխանիզմների ամրապնդման համատեքստում: Հակիրճ ներկայացրեց ծրագրում ներգրավված դասախոսների հետ հանդիպումներն ու քննարկումները՝ ծրագրի իրականացման ընթացքում առաջացած խնդիրների բացահայտման և դրանց լուծման հնարավոր ուղիների ուրվագծման համատեքստում: Հավելեց, որ հանդիպումներ են տեղի ունեցել նաև մագիստրոսական ծրագրում ներգրավված դասախոսների հետ, որոնց ընթացքում քննարկվել են ծրագրի բովանդակությանը, դասավանդման արդյունավետությանը, ուսումնական արդյունքների գնահատմանը և անհատական դասընթացների կազմակերպմանը վերաբերող տարբեր հարցեր: Այս քննարկումները նպաստել են ծրագրի իրականացման ընթացքում առաջացած խնդիրների բացահայտմանը

և դրանց լուծման հնարավոր ուղիների ուրվագծմանը: Ամփոփելով հաշվետվությունը՝ մատնանշեց հաշվետու ուստարում ծրագրի շրջանակում գրանցված ձեռքբերումներն ու դրական արդյունքները, ինչպես նաև շեշտադրեց առկա խնդիրներն ու կարևորեց դրանց լուծման ուղղությամբ հետևողական աշխատանքների իրականացումը:

Հարցեր չհնչեցին: Ելույթներ չեղան:

3. Դեկան Կ. Խաչատրյանը նախ շնորհակալություն հայտնեց «Միջազգային տնտեսական հարաբերություններ» մագիստրոսական կրթական ծրագրի ղեկավարին հաշվետու տարում կատարած զգալի և ծավալուն աշխատանքների համար, ապա կոչ արեց քվեարկությամբ հաստատել հաշվետվությունը՝ գնահատելով այն բավարար:

1.9 ՈՐՈՇԵՑԻՆ. Հիմք ընդունելով ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի մագիստրատուրայի «Միջազգային տնտեսական հարաբերություններ» կրթական ծրագրի ղեկավարի 2025-2026 ուստարվա ներկայացրած հաշվետվությունը և հաշվի առնելով խորհրդի նիստում արտահայտված կարծիքները՝ հաստատել 2025-2026 ուստարվա մագիստրատուրայի «Միջազգային տնտեսական հարաբերություններ» կրթական ծրագրի ղեկավարի հաշվետվությունը՝ գնահատելով այն բավարար:

Հաշվետվությունը հաստատվեց՝ միաձայն քվեարկությամբ:

Օրակարգի 1-ին հարցի ամփոփման շուրջ հարցադրումներ և ելույթներ

1. Հարց հնչեցրեց «Ֆինանսներ» կրթական ծրագրի 4-րդ կուրսի ուսանող Հայկ Արզումանյանը: Հարցադրումն առնչվում էր պրակտիկային. ինչպես է լուծվում խնդիրը, երբ ուսանողի աշխատանքային գործունեությունը չի առնչվում մագիստրոսական թեզի հետ:

2. Դեկան Կ. Խաչատրյանը հարցադրմանը պատասխանեց հակիրճ՝ մագիստրոսական թեզի թեմայի ընտրության հարցում գործում է բավականաչափ ճկուն մոտեցում, և մեծամասամբ այդ մոդելն արդյունավետ է, իսկ թեզի թեմայի և աշխատանքի վայրի անհամապատասխանության դեպքում ֆակուլտետն ուսանողին ապահովում է պրակտիկայի անհրաժեշտ վայրով:

3. Ելույթ ունեցան տ.գ.թ, ասիստենտ Կ. Սահակյանը, տ.գ.թ, դոցենտ Գ. Սահակյանը, տ.գ.թ, դոցենտ Հ. Հովհաննիսյանը, տ.գ.թ. Ա. Սարգսյանը: Ելույթներում բարձրացված հարցերն առնչվում էին 1 տարի տևողությամբ մագիստրոսական ծրագրում գիտական սեմինարի բացակայությանը և դրա հետևանքով առաջացած խնդիրներին, ֆակուլտետի բակալավրիատի շրջանավարտների՝ մագիստրոսական կրթական ծրագրերին դիմելու ցածր ցուցանիշներին և այդ ուղղությամբ տարվող իրազեկման աշխատանքների ակտիվացմանը, ինչպես նաև գնահատման համակարգի հնարավոր փոփոխությանը:

4. Դեկան Կ. Խաչատրյանը ելույթներում բարձրաձայնված խնդիրներին արձագանքելով՝ նշեց, որ մտահոգված է 1 տարի տևողությամբ կրթական ծրագրում գիտական սեմինարի բացակայությամբ: Ֆակուլտետի բակալավրիատի շրջանավարտների՝ մագիստրոսական կրթական ծրագրերին դիմելու ցածր ցուցանիշների առնչությամբ ընդգծեց, որ ֆակուլտետում կազմակերպվող մագիստրոսական կրթության առանցքային ուղենիշը պետք է լինի որակյալ կրթական ծառայությունների մատուցումը, և նշաձողն այս համատեքստում չպետք է իջեցվի: Գնահատման համակարգի հնարավոր փոփոխության հարցին ի պատասխան՝ առաջարկեց այս կնճռոտ խնդրի լուծման նպատակով ստեղծել աշխատանքային խումբ, որը կմշակի և կներկայացնի առաջադիմության բարձրացմանը նպաստող հիմնավորումների փաթեթ՝ ԵՊՀ համապատասխան մարմիններում քննարկման ներկայացնելու համար:

5. Դեկան Կ. Խաչատրյանը, օրակարգի 1-ին հարցի քննարկումն ամփոփելով՝ նշեց, որ ներկայացված հաշվետվությունները փաստում են արձանագրված էական տեղաշարժերի մասին, և հավելեց, որ կրթական ծրագրերի շուրջ ծավալված շահագրգիռ քննարկումը, մտքերի փոխանակությունը և ուսանողների բարձրաձայնած հարցադրումները մեծապես նպաստում են ուսումնական պլանների լավարկմանը՝ գործընթացին շարունակական բնույթ հաղորդելով: Առանձնահատուկ կարևորեց բակալավրի գործող կրթական ծրագրերի և մագիստրատուրայի 3 ծրագրերի միջազգային հավատարմագրման գործընթացը՝ ընդգծելով, որ ողջ ծանրությունը առավելապես առաջ են տարել ծրագրերի ղեկավարները, քանի որ փաստացի ձևավորված աշխատանքային խմբերը այդքան էլ արդյունավետ չեն գործել: Հավատարմագրման գործընթացի կարևորագույն փուլերից մեկը՝ ինքնավերլուծության զեկույցը գրեթե պատրաստ է:

Հավելեց, որ բակալավրի կրթական ծրագրերի մասով արձանագրվել է որակական աճ. իր դրական ազդեցությունն է ունեցել «ԵՊՀ տնտեսագիտական դպրոց»-ը և դիմորդների հետ տարվող արդյունավետ աշխատանքը: Ընդգծեց, որ, ի տարբերություն բակալավրի կրթական ծրագրերի, մագիստրատուրայում կա իրազեկման խնդիր, և կոչ արեց օգտագործել ֆակուլտետի բոլոր հնարավոր միջոցները՝ առկա բացը վերացնելու նպատակով: Նշեց, որ մագիստրատուրայի ընդունելության առաջին փուլը մրցույթով անցկացնելու ֆակուլտետի նախաձեռնությունը նպատակ ունի մեծացնելու ճկունությունը: Կրթական ծրագրերի որակն առանցքային հանձնառություն է, և բնական է, որ ընթացքում որոշ ուսանողներ հեռացվում են: Մասնավորապես՝ նախորդ ուստարում 131 ուսանող հեռացվել է ակադեմիական ցածր առաջադիմության, իսկ 13-ը՝ վարքագծային և կարգապահական կանոնները խախտելու հիմքով: Առանձնահատուկ կարևորեց գնահատման համակարգում 12 հնարավորից 2 միավորը ստանալու խնդիրը, ինչը հանգեցնում է քննական գործընթացի ձևախեղմանը:

Ընդգծեց, որ հաշվետու տարում ավարտական աշխատանքներից և մագիստրոսական թեզերից անբավարար գնահատական չլինելու փաստը տարված լուրջ աշխատանքի արդյունք է: Գործնական բաղադրիչի շարունակական աճը, հրավիրյալ դասախոսների ներգրավումը և դասընթացների երեկոյան կազմակերպումն էապես բարձրացնում են մեր մրցունակությունը. մասնավորապես՝ մագիստրատուրայի 3 ծրագրեր մասնակցել են ԵՊՀ լրացուցիչ ֆինանսավորման մրցույթին և շահած գումարն ուղղել ծրագրի բարելավմանը: Դեկան Կ. Խաչատրյանը ելույթը եզրափակելով՝ կրկին շնորհակալություն հայտնեց կրթական ծրագրերի ղեկավարներին:

2. ԼՍԵՑԻՆ. ՀՀ ԲԿԳԿ-ի կողմից ֆինանսավորվող «Հասարակական գիտությունների, հայագիտության և հումանիտար գիտությունների բնագավառներում հետազոտություններ - 2024» դրամաշնորհի շրջանակներում իրականացվող «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական զարգացման հեռանկարները թվային փոխակերպումների պայմաններում» գիտական թեմայի (ղեկավար՝ տ.գ.թ., դոցենտ Վարդան Սամվելի Ալեքսանյան) կատարման երկրորդ տարվա՝ 2025-2026 թթ. հաշվետվության մասին հարցը:

2. ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

1. Գիտական թեմայի ղեկավար տ.գ.թ., դոցենտ Վ. Ալեքսանյանը նշեց, որ գիտխորհրդի անդամները էլեկտրոնային ծանուցմամբ ստացել են գիտական թեմայի կատարման երկրորդ տարվա հաշվետվությունը, հետևաբար թեմայի բովանդակային ներկայացումը կլինի հակիրճ: Նախ, թվարկեց թեմայի շրջանակում Գիտական խմբի կատարած գիտահետազոտական աշխատանքներն ըստ ուղղությունների՝ **1)** գյուղատնտեսության թվայնացման մակարդակի համապարփակ գնահատում և առաջնահերթությունների սահմանում, **2)** գյուղացիական տնտեսություններում թվային կարողունակության և գյուղատնտեսական արդյունավետության միջև առկա կապի բացահայտում, **3)** շրջանաձև տնտեսության ներդրման հեռանկարները և ֆինանսական իրագործելիությունը ՀՀ գինու արտադրության ոլորտում՝ որպես սոցիալ-տնտեսական զարգացման կարևորագույն ուղի, **4)** թվային տնտեսության չափումը ՀՀ-ում և առկա խնդիրների լուծման ուղիները, **5)** նորարարության, մարդկային զարգացման և թվայնացման գործոնների համակցված ազդեցության գնահատում հետխորհրդային երկրների սոցիալ-տնտեսական կայունության վրա: Ամփոփ ներկայացրեց ըստ ուղղությունների կատարված հետազոտությունների բուն նպատակը, կիրառված տեսական հիմքը, գործիքակազմը և արդյունքները: Հավելեց, որ մեկ հոդված տպագրվել է Q2 ինդեքս ունեցող ՄԳՇ պարբերականում, իսկ երեք հոդված գրախոսության փուլում են՝ մեկը Q1, մյուս երկուսը Q2 ինդեքս ունեցող ՄԳՇ պարբերականներում: Ընդգծեց, որ ներկա պահին Գիտական խմբի անդամները խմբագրում են հետազոտության արդյունքներն

ամփոփող ևս երկու գիտական հոդված: Մատնանշեց, որ դրամաշնորհի շրջանակում ստացված գիտական արդյունքները Գիտական խմբի անդամների կողմից զեկուցվել է ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան Տնտեսագիտության ինստիտուտի հիմնադրման 70 ամյակին նվիրված միջազգային գիտաժողովում: Եզրափակելով հաշվետվությունը նշեց, որ դրամաշնորհի արտասահմանյան համաղեկավար պրոֆեսոր Ստանիսլավ Մինտան (Լեհաստան) 2025թ. հոկտեմբերի 5-11-ը գտնվել է ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետում: Այցի շրջանակում Գիտական խմբի անդամները աշխատանքային հանդիպումների և քննարկումների արդյունքում նախանշել և պլանավորել են ապագա անելիքներն ու գործողությունները, պրոֆեսորը մասնակցել է նաև 2025թ. հոկտեմբերի 8-10-ը ֆակուլտետում կազմակերպված միջազգային 2-րդ գիտաժողովին՝ հանդես գալով գիտական զեկուցմամբ:

2. Հարց հնչեցրեց տ.գ.թ., ասիստենտ Կ. Սահակյանը: Հարցադրումն առնչվում էր դրամաշնորհի շրջանակում կատարվող գիտահետազոտական աշխատանքներում կրթական բաղադրիչի առկայությանը:

3. Տ.գ.թ, դոցենտ Վ. Ալեքսանյանը հարցադրմանը պատասխանեց հակիրճ՝ գիտական հետազոտության արդյունքներն ըստ անհրաժեշտության կիրառվում են իր կողմից դասավանդվող դասընթացների շրջանակում:

4. Դեկան Կ. Խաչատրյանը հարցադրմանն անդրադառնալով նշեց, որ ՀՀ ԲԿԳԿ-ի կողմից ֆինանսավորվող դրամաշնորհները որպես կանոն կրթական բաղադրիչի պահանջ չունեն, դրանց նպատակը գիտական բաղադրիչների ընդլայնումն է և գիտական ներուժի հզորացումը: Հավելեց, որ ըստ էության քննարկվող հաշվետվությունը միջանկյալ հաշվետվություն է, քանի որ դրամաշնորհի շրջանակում գիտական թեմայի կատարումը 3 տարի տևողությամբ ծրագիր է:

Հարցի քննարկումն ամփոփելով, դեկան Կ. Խաչատրյանը առաջարկեց՝ գիտական թեմայի կատարման արդյունքները գնահատել քվեարկությամբ:

2. ՈՐՈՇԵՑԻՆ. Հավանություն տալ «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական զարգացման հեռանկարները թվային փոխակերպումների պայմաններում» գիտական թեմայի (ղեկավար՝ տ.գ.թ., դոցենտ Վարդան Սամվելի Ալեքսանյան) կատարման 2025-2026 թթ. հաշվետվությանը և գնահատել դրական՝ քվեարկության 24 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ արդյունքներով (հաշվետվությունը կցվում է):

3. ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ Տնտեսագիտության մեջ մաթեմատիկական մոդելավորման ամբիոնի դոցենտ Գ. Ղուկասյանի և ասիստենտ Ա. Խալաթյանի հեղինակած «PYTHON-ի գործիքակազմի կիրառումը ռեգրեսիոն վերլուծություններում» վերտառությամբ ուսումնական ձեռնարկը տպագրության երաշխավորելու վերաբերյալ հարցը:

3. ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

1. Դեկան Կ. Խաչատրյանը նշեց, որ սույն ուսումնական ձեռնարկը տպագրության երաշխավորելու միջնորդությունը ներկայացրել է ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի մեթոդական խորհուրդը: Ընդգծեց, որ 2025-2026 ուստարում ֆակուլտետի գիտական խորհուրդը թիվ 7 և թիվ 9 նիստերի որոշումներով տպագրության է երաշխավորել Տնտեսագիտության մեջ մաթեմատիկական մոդելավորման ամբիոնի դասախոսների հեղինակած 1 ուսումնական ձեռնարկ և 1 դասագիրք, ողջունեց ամբիոնի ակտիվությունը ֆակուլտետում իրականացվող դասընթացների ուսումնական ծրագրերին համապատասխան հայալեզու ուսումնական ձեռնարկների ստեղծման ու հրատարակման աշխատանքների կազմակերպման հարցում և հարցի քննարկման համար ձայնը փոխանցեց Տնտեսագիտության մեջ մաթեմատիկական մոդելավորման ամբիոնի վարիչ, տ.գ.թ., դոցենտ Ալվարդ Խառատյանին:

2. ԵՊՀ Տնտեսագիտության մեջ մաթեմատիկական մոդելավորման ամբիոնի վարիչ, տ.գ.թ., դոցենտ Ա. Խառատյանը նշեց, որ սույն ուսումնական ձեռնարկը հենված է ֆակուլտետում դասավանդվող «Տեղեկատվական տեխնոլոգիաները տնտեսագիտությունում» դասընթացի վրա և կազմված է «Էկոնոմետրիկա» դասընթացի ուսումնական ծրագրին համապատասխան՝ որպես դրա տեսական նյութի կիրառական-գործնական ուղեցույց: Մատնանշեց, որ ձեռնարկում տվյալների վիճակագրական վերլուծության և ռեգրեսիոն մոդելավորման գործնական մեթոդները ներկայացվում են Python ծրագրավորման լեզվի կիրառմամբ, իսկ ռեգրեսիոն վերլուծությունների և թեստերի ծրագրային իրականացման նպատակով կիրառվել է Python-ի մասնագիտացված գործիքակազմը՝ NumPy, Pandas, Matplotlib, Seaborn և Statsmodels, SciPy գրադարանները: Հավելեց, որ աշխատանքը գրախոսել են ամբիոնի դոցենտներ Ա. Խառատյանը և Ն. Զրբաշյանը, նաև ԵՊՀ Ակտուարական և ֆինանսական մաթեմատիկայի ամբիոնի վարիչ, տ.գ.թ., դոցենտ Կարինե Ավետիսյանը: Հավելեց նաև, որ առկա է ամբիոնի դոցենտ, տ.գ.թ. Ն. Քոչինյանի դրական կարծիքը ձեռնարկի վերաբերյալ:

3. ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի մեթոդխորհրդի նախագահ, տ.գ.դ., պրոֆեսոր Գ. Վարդանյանը նշեց, որ ձեռնարկը հաջողված է և կարող է օգտակար լինել նաև հարակից մասնագիտությունների հետազոտողներին, դասախոսներին, ինչպես նաև բոլոր նրանց, ովքեր ցանկանում են գործնականում տիրապետել Python միջավայրում ռեգրեսիոն վերլուծության ժամանակակից տեխնիկային: Հավելեց, որ ֆակուլտետի մեթոդխորհուրդը տվել է դրական եզրակացություն:

4. Հարցեր հնչեցրեցին տ.գ.թ., ասիստենտ Կ. Սահակյանը, տ.գ.դ., պրոֆեսոր Թ. Թորոսյանը: Հարցադրումներն առնչվում էին 2025-2026 ուստարում ֆակուլտետի

գիտական խորհրդի թիվ 7 նիստի որոշմամբ տպագրության երաշխավորված «Python ծրագրավորման հիմունքներ» ուսումնական ձեռնարկի և քննարկվող ձեռնարկի միջև առկա կապին:

5. Ուսումնական ձեռնարկի համահեղինակ դոցենտ Գ. Ղուկասյանը հարցադրումներին պատասխանեց հակիրճ՝ կա սերտ փոխկապակցվածություն՝ քննակվող ձեռնարկը «Python ծրագրավորման հիմունքներ» ձեռնարկի շարունակությունն է, իսկ «PYTHON-ի գործիքակազմի կիրառումը ռեգրեսիոն վերլուծություններում» ձեռնարկի շարունակությունը նվիրված կլինի ժամանակային շարքերին:

6. Հարցի քննարկումն ամփոփելով՝ դեկան Կ. Խաչատրյանը նշեց, որ երեք գրախոսների դրական կարծիքները, ամբիոնի որոշումը, ֆակուլտետի մեթոդխորհրդի դրական եզրակացությունը բավարար են ուսումնական ձեռնարկը տպագրության երաշխավորելու համար և առաջարկեց հարցը դնել քվեարկության:

3. ՈՐՈՇԵՑԻՆ. Հիմք ընդունելով ԵՊՀ Տնտեսագիտության մեջ մաթեմատիկական մոդելավորման ամբիոնի 09.06.26թ. թիվ 10 նիստի երաշխավորությունը, ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի մեթոդական խորհրդի դրական եզրակացությունը և խորհրդի նիստում արտահայտված կարծիքները՝ ԵՊՀ Տնտեսագիտության մեջ մաթեմատիկական մոդելավորման ամբիոնի դոցենտ Գ. Ղուկասյանի և ասիստենտ Ա. Խալաթյանի հեղինակած «PYTHON-ի գործիքակազմի կիրառումը ռեգրեսիոն վերլուծություններում» վերտառությամբ ուսումնական ձեռնարկը երաշխավորել տպագրության:

Ուսումնական ձեռնարկը երաշխավորվեց տպագրության՝ միաձայն քվեարկությամբ (24 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ):

4. Ընթացիկ հարցեր

4.1 ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի բակալավրի «Ֆինանսներ» կրթական ծրագրի ուսումնական պլանի փոփոխության հաստատման մասին հարցը:

4.1 ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

1. Բակալավրի «Ֆինանսներ» կրթական ծրագրի ղեկավար, տ.գ.թ., դոցենտ Գ. Սահակյանը նշեց, որ ըստ էության քննարկվող հարցի առնչությամբ իրականացվել է բովանդակային քննարկում ֆակուլտետի գիտխորհրդի 2026թ. ապրիլի 15-ի թիվ 10 նիստում՝ որպես օրակարգի առաջին հարց, և կայացվել է դրական որոշում: Սակայն Ֆինանսահաշվային ամբիոնի 2026թ. մարտի 19-ի թիվ 6 նիստի արձանագրությունից

տրված քաղվածքում առկա տեխնիկական վրիպակի պատճառով՝ «Պետական ֆինանսներ» դասընթացի փոխարեն նշված է եղել «Հարկային վարչարարություն», ֆակուլտետի գիտխորհրդի 2026թ. ապրիլի 15-ի թիվ 10 արձանագրության և դրա հիման վրա կազմված քաղվածքում «Պետական ֆինանսներ» դասընթացի փոխարեն նշված է եղել «Հարկային վարչարարություն»: Խնդրի լուծման նպատակով Ֆինանսահաշվային ամբիոնի 2026թ. մայիսի 15-ի թիվ 10 նիստում հարցը կրկին քննարկվել է և նիստի արձանագրությունից նոր քաղվածք է ներկայացվել ֆակուլտետի գիտխորհրդի քարտուղարին:

2. Դեկան Կ. Խաչատրյանը խնդրին անդրադառնալով նշեց, որ ֆակուլտետի գիտական խորհրդում բոլոր աշխատանքները կազմակերպվում և իրականացվում են ըստ պահանջվող կարգի և անհամապատասխանություններից խուսափելու նպատակով քննարկվող հարցը նորից անցել է բոլոր ընթացակարգերով և ներառվել գիտխորհրդի այս նիստի օրակարգի ընթացիկ հարցերում:

Հարցի քննարկումն ամփոփելով՝ դեկան Կ. Խաչատրյանը առաջարկեց՝ բակալավրի «Ֆինանսներ» կրթական ծրագրի ուսումնական պլանի փոփոխության հարցը դնել քվեարկության:

4.1 ՈՐՈՇԵՑԻՆ. Հիմք ընդունելով ԵՊՀ Ֆինանսահաշվային ամբիոնի 15.05.26թ. թիվ 10 նիստի որոշումը և հաշվի առնելով խորհրդի նիստում արտահայտված կարծիքները՝ հաստատել ֆակուլտետի բակալավրի «Ֆինանսներ» կրթական ծրագրի ուսումնական պլանում կատարված հետևյալ փոփոխությունը՝ «Պետական ֆինանսներ», «Ֆինանսների հիմունքներ», «Ֆինանսական ինստիտուտներ և շուկաներ» դասընթացների սեմինար ժամերը դարձնել գործնական:

Բակալավրի «Ֆինանսներ» կրթական ծրագրի ուսումնական պլանի փոփոխությունը հաստատվեց՝ քվեարկության 24 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ արդյունքներով:

ԵՊՀ ՏԿՖ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Կ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԵՊՀ ՏԿՖ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Հ. ՄԱՐԳԱՐՅԱՆ